2753

616.5
f-92

1881

616.5
Ֆ-12

60

# ՎԷՆԵՐԵԱՆ ԱԽՏԵՐ

Վէներեան ախտի պատմութիւնը հին աշխարհում։ Այժմեան աշխարհագրական տարածումն այս ախտի և նորա պատճառները։ Այս ախտի բաժանմունքն և դասակարգութիւնը։ Տրիպեր և նորա հետևանքները։ Փափուկ շանկրը և նորա հետևանքները։ Սիֆիլիս, նորա քայքայիչ ներգործութիւնը հիւանդի ամեն մի անդամի վերայ և ապագայ սերունդի վերայ։

Ընդհանուր և մասնաւոր խորհուրդները այս ախտերի դէմ։

Յաւելուած։ Մայրահիվ գրգիռն, երազախաբութիւն և մարմնաշարժութիւն։ Սեռական անընդունակութիւն։ Խորհուրդներ այս հիւանդութեանց մասին։

2002

ԲԺՇԿԱՊԵՏ ԳՐԻԳՈՐ ՔՈՒՉԱՐԵԱՆՑ

ԹԻՖԼԻՍ.
ՅՈՎՀԱՆՆԷՍ ՄՈՐՏԻՐՈՍԵԱՆՑ։ ՏՊԱՐԱՆՈՒՄ.
1881

ԼԻՈՆ ԳՐԱԴԱՐԱՆ

# ՀԱՄԱՌՕՏ ՊԱՏՄԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆ

Վէնէրեան ախտն այնքան հին է, ինչքան և ինքն մարդկութիւնը։ Իսրայելացւոց պատմութեան մէջ կան տեղեր, որտեղ շատ պարզ երևում է ախտի նկարագրութիւնից, որ վէնէրական հիւանդութիւններն տարածուած էին Հրէից ժողովուրդի մէջ, երբ նրանք անապատումն պրպտվում էին Եգիպտոսից դուրս գալուց յետ և բացատրում էին իբրև պատիժ նոցա թերահաւատութեան։

Երևի թէ այդ ախտն նոքա բերել էին իրանց հետ հին Եգիպտոսից։

Այստեղ անյարմար եմ համարում յիշել այն նկարագրութիւններն, որ կան Աստուածաշնչումն այս կամ այն յայտնի մարդի հիւանդութեան նկարագրութեան վերաբերութեամբ, որ ճիշտ վէնէրեան ախտի պատկերն են։

Թէ Հռոմայեցւոց և թէ Արաբացւոց գրուածներից պարզ երևում է, որ վէնէրեան ախտն շատ տարածուած է եղել հին աշխարհում։

Միջին դարից մենք ունենք շատ գրուածներ, որտեղ երբեմն ուղղակի, երբեմն կատակի ձևերով նկարագրվում է սրա և նորա տանջանքն վէնէրեան ախտից։

Այս հանգամանքներն ցոյց են տալիս պարզապէս, որ մարդկութիւնը ամեն տեղ և ամեն դարում ենթարկուած է եղել իւր փաղաքշիչ կռքերին։ Այնպէս, որ հին աշխարհն չի կարող պարծենալ իւր բարոյականութիւնով։

42254-60
Հ 2254
Գրադարան Библиотека

Ուրեմն և իզուր է նախատել մեր ժամանակուայ XIX-րդ դարու լուսաւորութիւնը, որ իբր թէ սա է պատճառն անբարոյականութեան։

Հին Հայաստանն էլ երևի աղատ չի եղել այս վէնէրեան կամ ինչպէս մի քանիսն թարգմանում են Ատղիկեան *) ախտից, որովհետև ունեցել է սերտ յարաբերութիւն այն ազգերի հետ, որոնք վարակուած են եղել այսպիսի ցաւերով, ինչպիսի են հրէաները, որոնց հարիւր հազարներով էին գաղթեցնում դէպի Հայաստան. Հռոմայեցիք, որոնց հետ ունէին մշտական քաղաքական յարաբերութիւն։

Իսկ Բիւզանդիայի ամենայն կերպի ներգործութեան մասին Հայաստանի վերայ էլ խօսք չը կայ։

Յիշում եմ մեր պատմութենից երկու հիւանդութեան նկարագրութիւն, որոնք շատ նման են սիֆիլիսի ախտին, այ է Աբգար թագաւորի և Վասակի հիւանդութիւնը։

Այսպիսի կարճարօտ պատմութիւնից յետ, յիշենք վէնէրեան հիւանդութեան,

---

*) Յիշելով ազգային առասպելաբանական պատմութիւնը, պէտք է ասել, որ մեր Ատղիկ չ'ատուածուհին առաւել համեստ է եղել Վէնէրայից։

Այս զեղեցիկ չ'ատուածուհուն իբրև պատիւ ամեն ազգեր, սեռական ախտ հիւանդութիւններին տուին սորա անունը։ Ուրեմն մենք էլ պահենք այդ բարձը կոչումն. թող չը բարկանայ մեզ վերայ նաղելի չ'ատուածուհին, նա մանաւանդ, որ մեր Ատղիկն աւելի համեստ էր պահում իւրեան Հայաստանում։

Մերձաւորապէս Հայր Սուրբ Նաճանը այս խմաստով է պատմում ժողովուրդի բերանից։ Տօթ օրերն Ատղիկ չ'ատուածուհին կերթայ երեկոյեանները լուացուելու և զովանալու Վանայ ծովի մէջ. Հայոց քաջերն լեռների գագաթին մեծ կրակներ կը վառէին (այժմ հանդած հրաբուխներ են), որ կարողանան տեսնել Ատղիկի մերկութիւնը։ Բայց նա այդ նկատելով համեստութիւնից քողով կը ծածկուէր (այսինքն առաւօտներն ջրից դուրս չի կը բարձրանար)։ Այս առասպելաբանութիւնից երևում է, որ մեր Ատղիկ չ'ատուածուհին ժողովուրդի համարմունքով առաւել համեստ և բարոյական էր։



ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ՏԱՐԱԾՈՒՄՆ ԵՒ ՊԱՏՃԱՌՆԵՐՆ։

Վէնէրեան ախտը բաւականին հաւասարապէս տարածուած է ամբողջ Եւրոպայումն, թէև կան տեղեր, որ աւելի սաստկացած են և կենդրոնացած։ Ինչպիսի են.

Ծովեզերքներն, ուր առևտրական յարաբերութիւններն շտապով են և հեշտացած։

Մեծ քաղաքներն.

Վէննան, Բերլին, Փարիզ, Լօնդօն, Հռոմ, Վէնէտիկ և այլն։ Թէև մեծ քաղաքներումն մեծ է առողջապահական հսկողութիւնը. բայց նոյնպէս և շատ է քանակութիւնը շռայլների, անառակների և անամուսնացածների։

Նա մանաւանդ մշակ դասն, որ հարկադրուած է գնալ դէպի նաւահանդիստներն և գլխաւոր քաղաքներն աշխատանք գտնելու։

Այնտեղ հեռու ընտանիքից շատ անգամ, նոքա վերադառնում են վարակուած ցաւերով։ Սոքա չ'ունենալով ոչ միջոց և ոչ հասկացողութիւն այս ախտերի կործանիչ հետևանքի վերայ, անհոգ անձնատուր են լինում, ըստ մեծի մասին, ոչ մի բժշկական խորհրդի չի դիմելով։

Ինչ կը վերաբերի Ռուսաստանին, սա ևս յետ չի մնացել ոչ մի եւրոպական տէրութիւնից։ Մեծ քաղաքների վերայ գոնէ քիչ ու շատ հսկողութիւն կայ, ինչպիսի են Պետերբուրգ, Մոսկվա, Օդեսա և այլն։

Բայց մի կողմից ժողովուրդի տգիտութիւնը և անհոգութիւնը, միւս կողմից նոցա անընդհատ գնալն թէ մարդկերանց և թէ կանանց դէպի մեծ քաղաքներն և վաճառաշահ տեղերն, ժողովուրդին հասցրեց այն դրութեան, որ շատ գաւառներում վէնէրեան ախտն տարածուած է համարեա ամեն մի ընտանիքի մէջ. կան գիւղեր և հասարակութիւններ, ուր ամեն մի անդամ աղատ չէ այդ ախտից, թէ մեծ և թէ փոքր, թէ կին և թէ մարդ։

Այս ախտն քանի գնում է իւր զոհերի քանակութիւնը աւելացնում է. քանի տգէտ ու գռեհիկ է ժողովուրդն, այնքան սաստիկ և կործանիչ է ցաւն: Օրինակի համար Սամոյեդների, Օսեակների մէջն, նոյնպէս հիւսիսային ասիական և եւրոպական Ռուսաստանի սահմաններում բնակվող ցեղերի մէջ, Սիբիրիայում, Կամչատկայում, Բալթիկեան գաւառներում, Լիփլանդիայում և Կուռլանդիայում, Փոքր Ռուսաստանում և այլն:

Մեր երկիրն, Անդրկովկասն, նոյնպէս ազատ չէ այս ախտից, օրէցօր այս ախտն իւր զոհերի քանակութիւնը մեծ արագութեամբ աւելացնում է: Տֆխիսն, իբրև կեդրոն երկրի, ունի մեծ քանակութիւն թէ հնացած ցաւերի և թէ նոր տարածուած: Գաւառներն, Քութայիսն իւր շրջակայքով, Գուրիան և Մինգրելիան, Ախալցխան և Ախալքալաքն, Երևանն և Աղէքսանդրապօլն, Բաքուն և այլ այսպիսի փոքր ինչ գործնական տեղերն լիքն են վէնէրիքական հիւանդութիւններով:

Մի կողմից վաճառականական յարաբերութիւններն, միւս կողմից անդադար պատերազմներն և զօրքի զետեղուիլն արագութեամբ տարածեցին այս ախտն դէպի ամէն մի ծայրն Անդրկովկասի:

Ամէն գաւառում կը գտնէք դուք մի քանի գիւղեր, որ համարեա բոլոր բնակիչներն վարակուած են այս ախտով: Այս արագ տարածուելու պատճառն ի միջի այլոց պէտք է տեսնել նորանում, որ ժողովուրդն բոլորովին անտարբեր է դէպի բժշկական հոգատարութիւն: Այն աւերակներն, որ թողնում է այս ախտն մարդու մարմնի մէջ ուրիշ երկիրներում, բաղդաւորապէս մենք մեզանում շատ քիչ ենք հանդիպում, սա մեր երկրի բարեխառն կլիմայի շնորքն է:

Բարձր լեռների վերայ և առաւել ճահճային տեղերն, եթէ այս ախտն հանդիպում է թուլակազմ մարդուն, աւելի արագ և քայքայիչ է ընթանում: Պատճառ ունենալով մի կողմից լեռնային ցուրտ օդն, իսկ միւս կողմից տենդային յատկութիւններն տափարակների, այս վերջի հանգամանքում վէնէրեան ախտն շատ անգամ աջակցում է ամենանուազեցուցիչ տենդին:

Պէտք է ասել, որ թէ Ղարսի գաւառում և թէ Հայաստանի միւս մասերում, որ Թիւրքիայի ձեռքին է, թէ տափարակների վերայ և թէ լեռների վերայ, վէնէրեան ախտն սաստիկ տարածուած է, ինչպէս և Թուրքաստանի ամէն տեղերն վատ և անհոգ կառավարութեան շնորքով, նա մանաւանդ այնտեղ, ուր հետք անգամ չը կայ մի որևիցէ կանոնաւոր բժշկութեան:



ԲԱԺԱՆՄՈՒՆՔՆ ՎԷՆԷՐԵԱՆ ԱԽՏԻ.

1) ՏՐԻՊԵՐ (սուսուկակ) և նորա հետևանքներն:
2) ՇԱՆԿԵՐ (փափուկ վէրք) և նորա հետևանքներն:
3) ՍԻՖԻԼԻՍ (կոշտ վէրք) և նորա հետևանքներն:

## I.

Տրիպերն մի այնպիսի հիւանդութիւն է սեռական անդամի, որ ըստ մեծի մասին փոխվում է կամ վարակվում է առողջը հիւանդի հետ սեռական յարաբերութիւն ունենալուց:

Նոր հիւանդացածն զգում է մի առանձին բորբոքումն միզային խողովակի, անհանգստութիւն և այրումն, նա շատ պում է շուտ շուտ թափել մէզն, բայց այդ նորան հանգըստութիւն չէ տալի, այլ ընդհակառակն բորբոքումն աւելացնում է և մէզը թափելիս հիւանդն զգում է մի սաստիկ այրող ցաւ խողովակի ծայրին, որ աւելանալով տարածվում է բոլոր մէզի ճանապարհի վերայ և փամփուշտի բերանին: Խողովակիցն սկսում է հոսել թարախ և լրծունդ սկզբիցն սպիտակ, յետոյ կանանչագոյն: Այս սրնթացութիւնը տևում է քանի մի օր և յետոյ թէև չի կսկծում այնքան, բայց և այնպէս

թարախի հոսանքն շարունակվում է; որ շատ անգամ անկարգ բժշկելուց, կամ բոլորովին չը բժշկելուց հետևում է երկարատև տրիպեր, որ ասում են խրոնիքական։

Այս վերջիս հանգամանքումն հիւանդութիւնը տեղաւորվելով առաւել խորն հիւսուածների մէջ, կամ խողովակի առաւել բարձր ընթացքումն դէպի միզային փամփուշտն, ճաքակում է և քայքայում և հետևաբար հաստացնում և ամրացնում է հիւսուածներն։ Այսպէս տալով հիւանդութեանը մի նոր առաւել ծանր հետևանք, այն է նեղացնելով այստեղ կամ այնտեղ մէզի խողովակի ծակն կամաց կամաց տարիներով հասցնում է հիւանդին այն դրութեանը, որ շատ անգամ էլ անկարելի է լինում մէզը թափել։

Ահա այս դէպքումն խողովակի նեղանալու պատկերն, միզելու ժամանակն, մէզը սկսում է բարակել, մինչև հասնում է այն դրութեանը, որ սկսում է կաթկաթել։ Այս դիպուածումն հիւանդն անդադար զգում է պահանջմունք միզելու, բայց ամեն անգամ կաթիլ կաթիլ թափելով չէ բաւականանում։ այդ ժամանակ զգացվում է մի առանձին խորն և ծանր ցաւ ամբողջ խողովակի մէջ, մանաւանդ մի ծակող ցաւ անդամի ծայրին շէքի միջումն և քամակումն աղիքի մէջ։

Սա արդէն հետևացնում է մի նոր հիւանդութիւն՝ բորբոքումն փամփուշտի բերանի կամ վզի։

Այսպիսի մի նոր հիւանդութիւն բարդուելուց կարծիք չը կայ հիւանդի դրութիւնը առաւել վատանում է, մէզը առաւել բարակում է և հոսում է ըստ մեծի մասին խառն մեծ քանակութեամբ թարախի ու լորձունքի։

Եթէ մէկ կամ երկու ժամ այսպիսի հիւանդի մէզն ածէք մի մաքուր ապակէ ամանի մէջ, կը տեսնէք տակին նստած մեծ քանակութեան պղտոր և թանձր հիւթ. բացի սորան շատ անգամ խողովակիցն էլ թափում է պղտոր հիւթ երբեմն արիւնախառն. այս հանգամանքումն միզելուց առաջ հոսում է մի քանի կաթիլ պղտոր հիւթ և յետոյ արդէն մէզն։



Երբեմն էլ հարկաւորութեան ժամանակն շատ դժուարելուցն հոսում է խողովակից պղտոր կամ բաւականին պարզ լորձունք, որ եթէ խոշորացուցով նայելու լինենք կը գտնենք շատ անդամ սերմն։ Ուրեմն վերոյիշեալ փամփուշտի վզի բորբոքման հետ միանում է և սերմնահոսութիւնը։

Կարծիք չը կայ վերոյիշեալ հիւանդութիւններն, առանց ներգործութեան չեն մնում նաև փամփուշտի վերայ։ Նա էլ կամաց բորբոքվում է, սկսում է տալ մէզի հետ մեծ քանակութեամբ թարախ և լորձունք, մէզն լինում է միշտ պղտոր և սաստիկ հոտած։ Հիւանդն զգում է մի ծանր և խորն ցաւ փոքրաթորումն։

Այսպիսիքն սկսում են նուազել և նիհարանալ։

Այս փամփուշտի հիւանդութիւնը բուժելու համար մեծ համբերութիւն է հարկաւոր, թէ բժշկի և թէ հիւանդի կողմից։

Եթէ գործն այսպէս շարունակվում է, փամփուշտիցն բորբոքումն բարձրանում է դէպի (պլՃիկներն) երիկամունքներն և տեղաւորուելով նոցա մէջ, գոյացնում է մի անբժշկելի հիւանդութիւն, որ ասվում է բորբոքումն երիկամունքների թարախահոսութեամբ։

Այսպէս կարճառօտ կերպով մտաբերելով հետևաբար տրիպերից առաջ եկած հիւանդութիւններն, կարդացողն պէտք է տեսնի թէ ինչ ծանր և զարհուրելի վտանգ կայ այսպիսի մի հիւանդի համար անձնատուր լինել տգէտներին և դալաքներին և հաւատալ ամեն մի մարդի ասածին ու փորձեր անել իւր ողորմելի գլխին։

Այստեղ հարկաւոր է յիշել և այն հիւանդութիւնը, որ շատ անդամ հետևում է նոյնպէս տրիպերից.— բորբոքումն խողովակի երբեմն բաւականին արագ բարձրանալով դէպի սեռական անդամներն և տարածուելով ամորձիքների մէջ, ձուաներն բորբոքում է և ուռցնում։ Այսպիսի մի հիւանդութիւն

շատ անգամ հետևացնում է անպտղաբերութիւն և ի հարկէ ոչնչացնում է գլխաւոր նպատակն ամուսնութեան, զրկելով որդեծնութիւնից։

## II.

### ՇԱՆԿԵՐ

## Փափուկ վէրք և նորա հետևանքները։

Հիւանդ կնոջ հետ հարակցութիւն ունենալուց յետ, սեռական անդամի վերայ նկատվում է մի փոքր տեղ առաւել բոլորակ ձևով կարմրութիւն, որ շատ շուտով քայքայվելով՝ նորա մէջ տեղն ծածկվում է թարախով, լուանալիս բացվում է վէրք հաւասարապէս կարմիր և ունի հարթ մակերևոյթ։

Նորա շրջակայ վէրքի և մորթու սահմանը օղի պէս կարմիր է և հաւասար։ Երբեմն վէրքն տարածվում է արագ և մեծանում է, շրջակայքն ուռչում են ստանալով մի ընդհանուր կապոյտ գոյն։ Այս հանգամանքումն վէրքն սաստիկ դժուարութեամբ է մեծանում և երբեմն ենթարկվում է մանաւորապէս շատ փթելուն և արագ քայքայվելուն։

Շատ անգամ վէրքից բորբոքվում են շրջակայ աւելամուկներն և ուռչում, պատճառելով սաստիկ ցաւ, հետևաբար թարախակալելով բլչում են կամ հարկաւոր է նշտար տալ, որ թարախը դուրս գայ։ Ահա կարճառօտ սորա հետևանքներն։

Այս հիւանդութիւնը թէև չունի ընդհանուր ներգործութիւն արիւնի և կազմուածքի վերայ յայտնապէս, բայց կարծես թէ թողում է մի նուազեցուցիչ հետք ամբողջ կեանքի մէջ։

---



## III.

### ՍԻՖԻԼԻՍ

## Կոշտ վէրք և նորա ընդհանուր հետևանքները։

Սիֆիլիքական թոյնը զետեղվում է մարմնու ամեն մասունքների մէջն։

Արիւնը, փցլինքը, սերմը, կաթը, և ամեն մի մարմնի վերայի պզուկն և նորա մէջ պարունակուած հիւթն ունին սիֆիլիքական յատկութիւն և կարող են փոխուել առողջ մարդու վերայ յայտնի ժամանակի ընթացքումն։

Մի անգամ սիֆիլիսով վարակուածն շատ հազիւ է պատահում, որ երկրորդ անգամ կրկին ստանայ այդ ախտ։

Սիֆիլիսն իւր գոյութիւնը ստանում է նորանից, որ հիւանդիցն ուղղակի անցնում է առողջի վրայ։

Նա ոչ մի ժամանակ ինքն իրան չի գոյանում,—տրիպերի և փափուկ շանկերի հիւանդութիւնը չի կարող փոխուիլ և ստանալ սիֆիլիսի յատկութիւն։

Սիֆիլիսի թոյնը կպչում է և վարակում է, երբ առանց արգելքի հիւանդն ունի յարաբերութիւն առողջի հետ կամ սեռական հարակցութիւնով, կամ համբուրով և այլն։ Զաւակը նոյնպէս հիւանդ է գոյանում արդէն յարգանդումն եթէ ծնողքն առողջ չեն։

Անուղղակի կարելի է հիւանդանալ անմաքուր գործիքների միջոցաւ, օրինակ զանազան ապերացիայի համար գործած դանակներն, բուժերն և այլն, եթէ այսպիսի հիւանդից յետ մաքուր չը լուացվեն։ Նոյնպէս հիւանդից յետ գործ ածած գդալն, բաժակն և այլն։

Քիչ չէ պատահում, որ եթէ ծաղկի հիւթն վեր առած է հիւանդ երեխայից և կրվում է առողջ երեխայի վրայ, ծաղկի հետ անցնում է և սիֆիլիս ախտն։

Շատ անգամ իբր թէ կանոնաւոր կերպիւ առողջացած մարդկերանց կանայքն, թէև ուղղակի վէրք չեն ստանում, բայց անցնում է նոցա մարմնի մէջ սիֆիլիսի հիւթն, նոքա նուազում են և թուլանում բոլորովին գունաթափ լինում, թէև մարմնի վրայ ոչ մի նշան չը կայ հիւանդութեան

Ոչ մի հասակ, ոչ մի բնութիւն և ոչ մի ազգութիւն ազատ չեն վարակուելուց, ինչպէս նորածին մանուկներն, այնպէս էլ զառամեալ ծերերն ընդունակ են իրանց մարմնի ամեն մի փոքր մասնիկի մէջ ընդունել, պարունակել և տարածել սիֆիլիսի ախտն։

## Սիֆիլիսի առաջին երևոյթն։

Սիֆիլիսն առաջ երևում է այն տեղն, ուր ուղղակի կըպչում է նորա հիւթն։

Վարակուած տեղն կարմրում է և ուռչում, մի քանի օրից յետոյ քայքայվում, թարախ բռնում և բաց է լինում վէրքը, ի հարկէ քանի սիֆիլիսի թոյնը սաստիկ է, այնքան նա առաւել քայքայիչ է ներգործում։

Այս վէրքն չունի սկզբիցն ոչ մի նշան, որ կարելի լինի ջոկել վերոյիշեալ փափուկ շանկերից. բայց մի փոքր ժամակից յետոյ վէրքի շրջակայքն սկսում են ուռչել և պնդանալ և կամաց կամաց հասնում են այն դրութեանը, որ շոշափելիս կարծվում է, թէ մի կտոր պինդ և կարծր բան է գոյացել մորթու տակն.—թէև վէրքը առողջանում է, բայց այս կարծրացած մասն ամիսներով մնում է, մինչև անգամ ամենականոնաւոր կերպիւ բժշկելիս։ Այս կարծրացած տեղն անհետանալուց յետոյ էլի քանի մի ժամանակ պէտք է շարունակել բժշկութիւնը։

Մարդ վարակուելով և ստանալով սիֆիլիսի վէրք պէտք է արդէն համոզուած լինի, որ առանց այլ և այլութեան պէտք է տարածուի հիւթն ամբողջ մարմնի մէջ, որ չը պէտք է մնայ և ոչ մի գնտակ անգամ, որ խմորուած չը լինի այդ ախտով։



Վէրք ստանալուն պէս մի քանի ժամանակից յետոյ հետեւաբար նկատվում է, որ աւելամուկներն շրջակայքումն ածուկների մէջ մեծանում են և կարծրանում։

Այս աւելամուկներն են, որ տարածուած լինելով, բոլոր մարմնի մէջ և միաւորուած լինելով առանձին խողովակներով ընդհանուր արեան հոսանքի հետ կամաց կամաց, բաժանում են իւրեանցից, արդէն ախտով խմորուած հիւթ և տալիս են բոլոր մասունքներին մարմնի արիւնի միջոցաւ։

Այս ընդհանուր վարակումն կարող է տևել բաւականին երկար ժամանակ մինչև կը երևայ մարմնի վրայ սիֆիլիքական նշաններն, բայց և այնպէս ոչ վաղ ամիս ու կէսից վէրք ստանալու օրից։

Սկզբիցն ընդհանուր վարակումն հետևում է մորթու վերայ, յետոյ բերանումն, քթումն, կոկորդումն, զաւակատանը, մեզի խողովակումն և այլն։

Սորանից յետոյ սկսում են ուռչել և ցաւել ոսկորներն մանաւանդ քթի և կոկորդի, աչքի միջի մի քանի հիւսվածներն։

Մի քանի ժամանակից յետոյ, սև լեռդն, փիծաղն, երիկամունքներն, թոքն և վերջապէս ուղեղն գլխի և մէջքի և այլն։

Կարծիկ չը կայ, որ եթէ հիւանդն իւր մարմնի ամեն մի անդամով խմորած և վարակուած է ախտով, նա պէտք է նուազի, կորցնէ իւր առողջութիւնը բոլորովին, մանաւանդ եթէ հիւանդն չունի միջոց կանոնաւոր ապրելու և բժշկուելու կամ թէ ունի մի և նոյն ժամանակ մի այլ երկարատև և նուազեցուցիչ հիւանդութիւն ինչպիսի են բարակացաւ, արիւնի պակասութիւն և այլն։

Շատ անգամ էլ անկանոն կամ շատ արագընթաց բժշկելուց հիւանդն ընկնում է, ինչպէս ասում են կեանքի վերջի թեն և մեռնում բոլորովին նուազած։

Ծնողքը եթէ կրում են իւրեանց մէջն սիֆիլիտիքական ախտի հիւթն, ըստ մեծի մասին նոցանից գոյացած երեխեն վիժվում է օրապակաս, կամ արդէն մեռած արգանդումն։

Առհասարակ սիֆիլիսն պահանջում է երկարատև բժշկութիւն, երբեմն տարիներ է հարկաւոր և մինչև անգամ մի քանի տարի բոլորովին առողջ անցկացնելուց յետոյ, պէտք է ենթարկուել կրկնակի բժշկի քննութեանը, թէ արդեօք հարկաւոր չէ մի առ ժամանակ նորից բժշկուել։

Հիւանդն սա պէտք է ունենայ ինկատի և նորա հետ պէտք է հաշտուի, որ, այս ախտն շատ դիպ բնայատուկեամբ անբուժելի է։

Այնպէս որ այսպիսի ախտով վարակուածը շատ լաւ կանէ, եթէ տկարանալիս մի որ և իցէ այլ հիւանդութիւնով, միշտ յիշեցնէ իւր բժշկին, որ նա մի անգամ ենթարկուած է եղել սիֆիլիտիքական ախտին թէև շատ հեռու անցեալումն։—թէև ուղղակի ինքն սիֆիլիսն հազիւ է պատճառում մահ, բայց առողջութիւնը այնպէս զարհուրելի կերպիւ քայքայվում է, որ հիւանդն հեշտութեամբ է ենթարկվում, ամեն մի պատահական ցաւերին և որովհետև մարմինը թուլացած է չի կարողանում ընդդիմադրել և զոհ է գնում։

Վերջին ժամանակն համարեա ամեն երկրում նկատուեցաւ, որ մեծ քանակութեամբ թոքախտով, բարակացաւով հիւանդներն կամ իրանք են եղել հիւանդ սիֆիլիսից կամ ունեցել են այդ ախտով վարակուած ծնողք և ստացել են ժառանգութիւն։

---

## Մորթու հիւանդութիւններն

Աւելամասներից յետոյ երևում են վարակման նշաններն մորթու վրայ, նոքա կամ առաջ են գալի տեղական բորբոքուելուց, կամ գոյանում է նոր գործուածք մորթու մէջ։

Առաջի անգամն որ մորթու վրայ դուրս է փչում հետևում է 8—10 շաբաթից յետոյ հաշուելով վերք ստանալու օրից։

Շատ անգամ հիւանդն զգում է մի տենդային ցնցումն մարմնի մէջ, որին հետևում է տաքութիւն, իսկ սորանից յետոյ երևում են անթիւ բոլորակ բծեր մութը կարմիր գոյնով փոքր ինչ բարձրացած մարմնի մակերևոյթից.—ժամանակի ընթացքում նոցա թիւը պակասում է ընդհանրապէս, բայց առաւելանում է մի քանի տեղեր։ Ինչպէս են ճակատն, ծործորակն, գլուխն, շրթունքների անկիւնները և այլն։

Օրեցօր քանի հիւանդութիւնը հնանում է, այնքան բծերի գոյնը փոփոխվում է և այնքան առաւել ստացվում է մութ պղնձեայ գոյն, որովհետև մարմնի վրայ ծածկող բոլոր մորթն միակերպ պայմանի տակ չէ, այսինքն մի տեղ բաց է ինչպէս ձեռներն, երեսն և վիզն, մի տեղ առաւել է քրդնում, ինչպիսի են կռան տակերն, շեքն, ոտի մատների մէջն. մի տեղ մորթին առաւել բարակ է, իսկ միւս տեղ, ընդհակառակն, հաստ է և այլն։

Այնպէս էլ այն բծերն, որ առաջ են գալիս մորթու վրայ սիֆիլիտիքական ախտից, ունենալով զանազան պայմաններ և ժամանակ իւրեանց գոյութեան և զարգանալու համար, շատ զանազան ձևակերպութեան և զարգացման են ենթարկվում, այնպէս, որ մի հիւանդի վրայ կարելի է տեսնել ամենայայլայլ ձևերն կաշու հիւանդութեան մի և նոյն ժամանակումն ուռած, պնդացած, բաց վերքեր և թարախակալած տեղեր, մեծ և փոքր ձևով և այլն։

Այսպէս կաշվումն գոյացած բոլոր հիւանդութիւններն և նոցա տեսակներն ունեն իւրեանց անուններն, իւրեանց առանձնապէս զարգանալու և անհետանալու ձևերն և հարկէ մանրամասնաբար մշակուած և կարգի դրած են, բայց այստեղ անյարմար է մեզ մի առ մի յիշել, բաւական է գիտենալ, որ ինչ կերպի և լինեն նոքա և ինչ անուն էլ կրեն առանձնապէս մի ծագումն ունեն, դա է սիֆիլիսն։

Կաշուի հիւանդութեան հետ զուգընթաց շատ անգամ հետևում է գլխի մազի թափվելն։

Սոցա հետ միասին երևում է և սիֆիլիտիքական վարակումն բողազի, կամ այնտեղ բացվում են վերքեր, կամ ուռչում

են և կարծրանում հիւսածներն, այնպէս որ շատ անգամ արդելում են կուլտալուն. ի հարկէ բերանի միս տեղերի և լեզուի վրայ շատ անգամ երևում են այս կամ այն ձևի սիֆիլիտիքական պղուկներն կամ վէրքերն։

Նոյնը կարող է հետևալ կոկորդումն։ Շատ անգամ դուք կը հանդիպէք հիւանդի, որ ձայնը կորցրել է, այդ կոկորդի և ձայնի լարերի հիւանդութիւնից է։

Քթի մէջն էլ շատ անգամ պարունակվում է, մանաւանդ ժառանգական հիւանդութիւնից, այն ժամանակ գարշելի հոտ է գալիս քթից և պատահում է, որ ոսկոռներն փթում են և քիթը ստանում է մի այլանդակ ձև, որ ձեզանից ամենքն էլ տեսած կը լինեն։

Այս վերոյիշեալ ցաւերից յետոյ պատահում է շատ յաճախ ոսկռացաւ, ինչքան ցաւն սաստիկ է ճնշում մարմինը, այնքան առաւել է ոսկորների տանջանքը, տանջանք եմ ասում, որովհետև անտանելի են այն ցաւերն որ կրում է հիւանդն, մանաւանդ գիշերներն անկողնի մէջ։ Ի հարկէ շատ է պատահում, որ ոսկռացաւն այնքան սաստկանում է, որ հետևում է բորբոքումն և այս կամ այն ոսկռի կտորն փթում է և վեր ընկնում, ըստ մեծի մասին սա պատահում է գլխի ոսկորներումն։

Այս միևնոյն հիւանդութիւնը պատահում է ղրղճուկների մէջն, կոկորդումն, կողքերքումն և այլն։

Նոյնպէս շատ է պատահում բորբոքումն սիֆիլիտիքական թէ մեղի խողովակի և թէ ամորձիքների (ձուաների) որ կան թէ մեղի խողովակի և թէ ամորձիքների (ձուաների) որ սկզբից ուռչում են, և յետոյ փոքրանում և մանրանում, այնպէս որ կորցնում են իւրեանց բնական նշանակութիւնը։

Նոյնպէս ազատ չեն վարակուելուց միանուքներն և նոցա կռաջիլներն, որ շատ անգամ իւրեանց իբր թէ բարոյական համարող մարդիքն ասում են ռեվմատիզմի քամի։

Մարդիս ներքին մասներն նոյնպէս ազատ չեն այս վարակիչ հիւանդութիւնից՝ սոցա մէջ առաջին տեղն է բռնում սև լեառթն, որ շատ անգամ, ենթարկուելով սիֆիլիտիքական



ախտի ներգործութեան, տեղ տեղ բորբոքվում է, ուռչում և թարախ բռնում, տեղ տեղ էլ պնդանում։ Երբեմն հիւանդի վրայ գալիս է ընդհանուր դեղնութիւն և սև լեառթի բորբոքումն ստանալով սրնթաց ձև, մեռցնում է շատ արագ։ Մի և նոյն կերպիւ ենթարկվում է փիծելն, որ շատ անգամ, ամբանում է, կարծրանում և պնդանում։

Ինչպէս վերևն էլ յիշեցինք թոքի բորբոքումն և առհասարակ թոքաախտն շատ անգամ վիճակուած է թէ ժառանգական սիֆիլիս ունեցողներին և թէ նոր ստացածներն, շատ անգամ ահագին քանակութեամբ բղլամ և արիւն են հոսում թոքից, հիւանդն այրվում է տաքութեան մէջ և մեռնում է իբր թէ բարակացաւից, բայց եթէ պատճառն հասկանալի լինէր, նա անկարծիք ազատուած էր։

Այս ախտն չի խնայում և սիրտն, այն սիրտն, որին բանաստեղծներն տալիս են ամեն սիրահարական յատկութիւններն, թէ ինքն սիրտն և թէ արեան խողովակներն ենթարկուելով այս ախտին պատճառում են ի թիւս այլոց արիւնաթուղեղի մէջ և դամբլութիւն, վարակելով արեան խողովակի հիւսվածներն։

Աչքի լոյսն, որ ամենայն արարածի կենաց մխիթարութիւնն է և ազատ չէ այս ախտից. աչքի ամեն մի հիւսուածներն առանձնապէս կամ միասին ենթարկվում են սիֆիլիտիքական բորբոքման և եթէ չեն բժշկվում պատշաճաւոր կերպիւ արդէն կամաց, կամաց հասնում են կոյրութեան, միայն սա էմխիթարական, որ աչքի հիւանդութեան մէջ, սիֆիլիտիքական վարակումներն ամենայաջող բժշկելին են։

Թէ գլխի ուղեղն և թէ միջքի, ինչպէս սորանից քիչ առաջ յիշեցինք, բացի նորան որ ենթարկվում են արիւն կաթի, շատ անգամ մի յայտնի տեղ, բորբոքվելով առաջ են բերում այն հետևանքներն ինչ դեր որ խաղում է ուղեղի մէջ վարակուած տեղն.—օրինակի համար, եթէ ուղեղի հիւանդացած տեղից սկիզբն են առնում ականջի լսելիքի ջղերը (ներվերն)

հետևում է խլութիւն, եթէ աչքի, պատահում է կոյրութիւն, եթէ քթի, հետևում է հոտոտելեաց կորուստ և այլն։

Երբեմն կամ բորբոքվելով ուղղի փառերն, կամ գոյանալով ոսկռաուռուցք և սեղմելով ուղեղն հետևացնում է ցնորումն, դժութիւն կամ մի և նոյն կերպիւ գոյանալով հիւանդութիւն ողնաշարի ուղեղի մէջ պատճառում է թուլութիւն ներքին անդամոց, զրկում է ոտից, սեռական ընդունակութիւնից մեզն կապ պահելուց կամ աղտ հոսելուց և այլն։

Երբեմն այս կամ այն անդամի ջղերի բորբոքումն և վարակումն պատճառում է անկարագրելի ցաւ, օրինակի համար երեսի, աչքի, ոտի և այլն ջղերն շատ անգամ ենթարկվում են այդ ախտին և պատճառում են չափազանց ցաւ և տանջանք հիւանդին։

---

## Ժառանգական սիֆիլիս.

Այս աննախանձելի ժառանգութիւն ստացող երեխայքն, կամ օրապակաս վիժվում են մօր յարգանդից արդէն մեռած կամ հազիւ կենդանի, կամ շատ երկար չեն ապրում, կամ թէ ապրելով վարակուած են լինում ամենայն կերպի կաշուացաւով, ոսկռացաւով և առհասարակ երկարակեաց չեն և մեռնում են մանուկ հասակումն, որովայնի և աղիքների, կամ թոքի և ուղեղի բորբոքումից։

Իսկ եթէ այսպիսիներն ապրում են և մեծանում, ամենեւին անօգուտ են թէ ընտանիքի և թէ հասարակութեան համար, նոցա չի կարելի ասել, որ ծնողքն բարի յիշատակ են թողել։

Շատ անգամ նոցա ոսկռներն ենթարկուելով սիֆիլիտիքական ախտին դեռ մանուկ հասակում ուռչում են և ծռվում, դագաթի ոսկռներն անկանոն հաստանալով՝ սեղմում են ուղեղն և արգելում են զարգանալ, ուրեմն նոքա լինում են համեմատաբար յիմար.—ողնաշարի ոսկռներն ծռուելով այլայլում են կուրծքի և փորի մէջ գտնուած անդամներն։

Նոցա կենսական ընութեան պահանջմունքներն անկանոն դրութեան մէջ լինելով նոքա հեշտագրգիռ են, հիւանդոտ, երկչոտ սինլքոր և այլն։

Այս յատկութիւնների վերայ աւելացրէք և յիմարութիւնը ինչպէս հետևանք նորա գագաթի անկանոն զարգանալն և դուք կունենաք մի կատարեալ հրէշ թէ բարոյական և թէ մարմնով։

Սոցա համար էր երևի Սպարտայի օրէնքն, որ հիւանդ երեխանց ոչնչացնում էին, սերունդը չը ապականելու համար, ճշմարիտ է ասած լաւինացոց առակն, որ առողջ մարմնի մէջ պարունակվում է առողջ հոգի։

Այսպիսի մի սերունդ, որ մեր դարը տալիս է, ինչ կարող է տալ թէ իւրեան և թէ հասարակութեանը, եթէ ոչ միայն կատարեալ անկումն թէ մարմնական և թէ հոգեկան գեղեցիկ յատկութիւնների։

Հասկացողը պէտք է հասկանայ, որ այսպիսի որդկերանցով մի որ և իցէ ազգ շատ հեռու չի կարող գնալ,—ուրեմն ինչքան պարտաւոր են հիւանդոտ ծնողքն իւրեանց թէ հրէշ ժառանգի առաջ և թէ հասարակութեան առաջ, որ ամուսնանում են և առաջ են բերում մի անպիտան և բոլորովին ինքասակար սերունդ։

Իսկ հիւանդն, որ ինքն է եղել պատճառն իւր վարակուելուն, բացի բոլոր այն մարմնական տանջանքի և քայքայման, որ յիշեցինք կարճորէն, նորա հոգեկան դրութիւնն էլ ենթարկվում է շատ ծանր ճնշողական տրամադրութեան, տխրութիւնը միշտ պատած է նորան նա զգում է յուսահատութիւն կեանքի և առողջութեան մասին, ամենաչնչին բանը նոցա գրգռում է, լարում նոցա մտաւոր զօրութիւնը և շուտով թուլացնում։

Շատերն սորանցից այսպէս բացագրութիւն են տալիս «կարկարծես որ երկինքը գլխիս քանդուելիս լինի։»

Շատերն ամպից, կայծակից սաստիկ վախենում են և տագնապում. գիշերուայ մութն ընկնելիս շատերն մենակ չեն կարողանում մնալ։

Շատերն տանջվում են մի որ և իցէ ցաւից, գլխի, ոտի կամ մի որ և իցէ ոսկորի, մանաւանդ անձրևային և նամ եղանակին. այնպէս որ նոցա ցաւն համարեայ մի բարոմետրական նշանակութիւն ունի իւրեանց համար եղանակը խառնվելիս։

## Ընդհանուր հոգս և խորհուրդ.

Հին ժամանակից արդէն սեռական անդամների վրայ ուշք էր դարձնվում օրէնսդէտների կողմից, շատ ազգերի մէջ այդ հոգն դարձաւ կրօնական օրէնք, ինչպիսի են թլպատութիւնը և լուացվելն։

Այս կրօնական օրէնքներն ունեն իւրեանց առողջապահական նպատակներն.—թլպատութիւնը հրէից և մահմետականաց մէջ մեծ նշանակութիւն ունի առողջութեան համար, այն բոլորովին աւելորդ մորթին, որ կորում են անդամի վրայից, ունի իւր տակի կողմից այնպիսի մասներ, որ բաժանում են իւրեանցից մի թանձր հիւթ և մնալով մորթու տակ մի կողմից բորբոքում են մորթին և ընդհանրապէս ամբողջ անդամն գրգռելով համարեայ երեխայ հասակից սովորեցնում են մարմնաշարժութեան, իսկ միւս կողմից տեղական մորթն գրգռուելով բորբոքվում է և առաւել ընդունակացնում և յարմարացնում վարակիչ ախտերին ենթարկվելու։ Սորա վրայ պէտք է աւելացնել և այն որ անդամի մորթին հեռացնելով մանուկ հասակից, ընդհակառակն անդամի գլխի կաշին կարծրանում է և հաստանում և ի հարկէ աւելի ընդիմադրում վարակիչ ախտերին։

Լուացվելն մանաւանդ տաք երկիրներում պահպանում է մաքուր թէ սեռական անդամն և թէ նորա շրջակայքն, և



ի հարկէ շատ դէպքերում հեռացնում է և այն ախտի հիւթն, որ կարող էր վարակել կարծիքաւոր հարակցութիւնից յետ։

Ակզբիցն իմ խորհուրդն այս է, որ ծնողքն եթէ հարկադրուած են ծծմայր ունենալ երեխի համար, պէտք է ամենախիստ ընտրողութիւն անել այդ բանումը։ Երեխանց մանուկ հասակից պէտք է ուշք դարձնեն նոցա սեռական անդամների վրայ, շուտ շուտ լուանան, մաքուր պահեն, երբեմն հասարակ ձէթ քսեն, այն տեղերին, ուր որ շատ անդամ կ'տեսնէք երեխայքն անդադար իւրեանց ձեռքերն տանում են քորում, ու ճմռում։ Եթէ միմիայն մաքրութիւնը չի հանգստացնում երեխային, պէտք է անուշադիր չը լինել այդ երևոյթին և դիմել բժշկի խորհրդին։

Իսկ եթէ բժիշկ չը կայ, կարելի է լուանալ երեխայի սեռական անդամն թոյլ շաքարով կամ կաղնի ծառի կեղևն (կլեպն) ջրի հետ եփել և նորանով լուանալ։

Այսպիսի երեխանցն երկար ժամանակ օրօրոցումն կապած չը պէտք է պահել, օրօրոցի շորերն շուտ շուտ պէտք է փոխել։

Երեխանցն շատ տաք տեղ չը պէտք է նստացնել։ Երբ որ մանուկ հասակից երեխայի համար դառնում է պահանջմունք մաքրութիւնը, նա արդէն շարունակում է իւր ամբողջ կեանքումը սիրել մաքրութիւնը և պահպանել իւր անձն։

Մեր երկրումն փոխանակ ուղղեն զարգացնելու, շատ շուտով երեխին զգալ են տալիս իւր սեռական անդամի գոյութիւնը, նա վաղօրօք հասկանում է, որ պատկանում է այս կամ այն սեռին։

Վատ օրինակների համար էլ հեռու գնալու հարկաւորութիւն չը կայ։ Տանը իսկ իւր ծնողքը, թէ վարքով ու բարքով, թէ խօսակցութիւնով ու հայհոյանքով։ Դռեհիկ և անկարգ ծառաները, փողոցի փչացած երեխաները, ուսումնարանի սրիկայ և լիրբ ընկերներն, իւրեանց անկիրթ դաստիարակներով շատ շուտով զարգացնում են երեխաների մէջ սեռական զգացմունքն և փաղաքշանքն։

Կարծիկ չը կայ, որ վէներեան ախտի տարածուելն և զարգանալը մեծ կապ ունի բարոյականութեան հետ։

Քանի բարոյականութիւնը անկնում է, այնքան ախտն սաստկանում է և տարածվում։ Վերոյիշեալ փչացած երեխաներն անկարծիք բոլորն էլ ապագայ ծառաներ են վէներեան ախտի։

Արդէն հասակն ստացած երիտասարդ մարդկանց համար նոյնպէս սաստիկ մեծ է վտանգն վէներեան ախտով վարակուելու։

Մի կողմից բնութեան պահանջը, իսկ միւս կողմից, մեր այժմեան կենսական ծանր պայմաններն արգելառիթ են լինում օրինաւոր ամուսնութեան։

Ուրեմն հետևաբար տարածում են անառակութիւնը և վէներեան ախտը։

Ա. հասարակ հասարակութեան և կառավարութեան պարտականութիւնն է հոգալ և առաջն առնուլ վէներեան ախտի տարածուելուն։

Տալ ժողովրդին ճիշտ և թարմ հասկացողութիւն, այս ցաւերն ճանաչելու և զգուշանալու։ Երբ որ ժողովուրդն կուներնայ ճիշտ գաղափար ի հարկէ կ'զգուշանայ և հետևաբար փոքր ի շատէ ազատ կը մնայ վարակուելուց։

Որովհետև մեր ժամանակումն արդէն անառակութիւնը բաւականին բաց արձակ երևում է մեր հասարակութեան մէջ, ուրեմն և հեշտ է նորա վրայ դիտելն։

Տեղական առողջապահական ոստիկանութեան բժշկի պարտականութիւնն է շաբաթական գոնէ երկու անգամ նայել և զննել. անառակացած կանանց սեռական անդամն, եթէ կը երևայ մի որ և իցէ կարծիքաւոր նշան, իսկոյն բժշկել և առաւել լաւն է հիւանդանոց ուղարկել։

Եւրոպայումն շատ տներ կան անառակութեան, ուր որ մարդիքն, մուտք գործելով սեռական յարաբերութեան համար ենթարկվում են զննութեան և կարծիքաւոր դէպքումն հեռացվում են։



Այս ընդհանուր ոստիկանութեան դիտողութիւնը չը ծառայելով մեր նպատակին չի կարող մտնել մեր գրուածքի պարունակութեան մէջ, ուրեմն այս մի քանի խօսքն բաւական է. դառնանք մասնաւորին։

---

## Տրիպերն կամ թարախահոսութիւնը մարդու, կնոջ և նորածին երեխայի վրայ։

ա. Մարդն վարակուած լինելով սուսունակով ի հարկէ պէտք է կորէ իւր սեռական յարաբերութիւնը կնոջ հետ և սկսէ բժշկուել, ի հարկէ, որտեղ բժիշկ կայ պէտք է, իսկոյն դիմէ նորա օգնութեանը։ Մեծ թէթևամտութիւն է դիմել այս և այն անկիրթ դալաքներին, կամ վեր առնել իւր ծանօթներից մի որ և իցէ դեղային տոմսակ, ինչպէս շատ անգամ պատահում է և սկսել ինքն իւրեան բժշկել և իւր գլխին դալաքութիւն անել։

Երբ որ արդէն հիւանդն նկատեց, որ նա վարակուած է տրիպերով, խողովակից հոսում է թարախ և այրում է շռելու ժամանակն, իսկոյն պէտք է զգուշանայ, կեղտոտ և թարախոտ ձեռներով չը պէտք է մնայ, մանաւանդ պէտք է զգուշանայ, որ այդպէս ձեռներով աչքերին և պռոշներին չը դիպչի, որովհետև հեշտութիւնով կարող է վարակել մանաւանդ աչքերն, որ շատ անգամ ամենահմուտ կերպիւ բժշկելիս էլ, զրկվում է աչքի լոյսից, իսկ ախտից ազատուելու համար աւելի լաւ կը լինի հանդիստ մնայ, շատ չը մանդայ, երկար ոտի վրայ կանգնած չը կենայ։ Ամօրձիքներն ձուաներն պէտք է վերկապել, որ չը ուռչեն։ Կերակուրների կողմից պատրաստ լինի թթու ու աղի բանից։

Նոյնպէս խմչքից արաղից, գինուց մանաւանդ գարեջրից և զանազան պրձպրձան ջրերից զգոյշ պէտք է լինի. կերակուրն պէտք է լինի հասարակ, մսեղէն, կանաչեղէն և կաթնեղէն։

Գիշերն շատ փափուկ անկողնում չը պէտք է պարկի, մանաւանդ մէջքի վրայ որ չեցէ թէ շատ բորբոքուի և ցաւն աւելի սաստկանայ։ Նա մանաւանդ որ այս հիւանդութեան մէջ սեռական գրգիռն միշտ սաստիկ է։

Սկզբից իբրև դեղ կարելի է խորհուրդ տալ, նշնից կամ կանեփի սերմից շինած կաթնի խմել կամ խմել հասարակ կովի կաթն ջրի հետ։ Առհասարակ պլօճիկներին վնաս են զանազան բալզամներն, որ շատ անգամ ընդունում են։

Նոյնպէս վնասակար են այս նպատակով հաղարաւոր արտասահմանից բերած դեղերն։

Սկզբից քանի շռելու ժամանակ կսկիծն սաստիկ է, բացի կաթն, որ խմում են, սեռական անդամն կարելի է փաթաթել սառը ջրումն դրչած քաթանի փալասների մէջ, կամ ամբողջ անդամն շուտ շուտ դնել սառն ջրի մէջ։ Խողովակն կարելի է շփել (спринцовать) պլտանով կարմիր գինի կամ սառն ջուր օրական 3—5 անգամ։ Այսպիսով արդէն մի շաբաթուայ մէջ հիւանդն թէթևանում է ցաւերից։

Այնուհետև մի որ և իցէ թոյլ դեղով (ինչպէսի են արձիճի, կէկի, շբի և այլ հալուածներն) կամ նոյն կարմիր գինով շփելով խողովակն օրական երկու անգամ հասնել կատարեալ առողջութեան։

Ինչ կը վերաբերէ երկարատև տրիպերին, խողովակի նեղանալուն, փամփուշտի առաջնաւոր մասի, փամփուշտի և երիկամունքների հետևաբար հիւանդութեանցն, այստեղ միմիայն կարող եմ ասել օրով առաջ, առանց ժամանակ կորցնելու դիմել հմուտ մասնագէտ բժշկին։

բ. Առհասարակ ամսականի (լուսին տեսնելու) ժամանակ արգելուած է յարակցութիւն ունենալ կնոջ հետ, բացի այլ վնասներն կարող է հետևել տրիպեր, կինը երբոր տրիպերով տկար է, նորան տալիս եմ մի և նոյն խորհուրդներն, ինչ և մարդուն. բացի այդ խորհուրդ եմ տալի մաքրութիւն և մաք-



րութիւն. լուացվել շուտ շուտ գոլ ջրով և հաքնուելուելի տաք, մանաւանդ լուսնի ժամանակն։

Իսկ եթէ այդ հիւանդութիւնը պատահել է յղի ժամանակն, շտապել շուտով բժշկուել մինչև որդեծնութիւնը, որ երեխեն չը վարակուի մի և նոյն ցաւով—իսկ եթէ որդեծնութեան ժամանակն մանկաբարձն (տատամայրն) նկատում է կամ զգուշացրած է, որ կայ թարախահոսութիւն պէտք է ծնընդկանի սեռական անդամներն պատրաստ է մինչև երեխան ծընուելն. մաքուր լուանայ և շփէ գոլ ջրով, օծէ զանազան իւղերով խառն սալիցիլի կամ կառբոլի հետ։

գ. Երեխէն ծնուելուց յետ իսկոյն և եթէ լողացնէ մաքուր։ մանաւանդ ուշադիր լինի աչքերին և շուտ շուտ լուանայ մաքուր և զով ջրով, եթէ նկատում է մի որ և իցէ անմաքրութիւն աչքերի վրայ, կամ երեխէն վախում է լոյսից, անհանգստանում է և լաց լինում, մանկաբարձն պարտական է իսկոյն զգուշացնել ծնողացն և հրաւիրել մասնագէտ բժիշկ աչքի հիւանդութիւնների։

Ինչ կվերաբերէ ինքնապաշտպանութեանը վէներեան ախտից կարծիքաւոր յարակցութիւնից առաջ խորհուրդ ենք տալիս իւր անդամն լուանալ մաքուր ջրով, նոյնպէս հարկադրել որ կինն էլ լուացուի, բացի այդ շատ լաւ կը լինի օծանել մարմինը մի որ և իցէ իւղով, կամ ձէթով խառն սալիցիլի կամ կառբոլի հետ։ Իսկ յարակցութիւնից յետոյ իսկոյն լուացուել կրկին ջրով արաղի, օդիկալոնի, քացախի կամ այլ այսպիսի բանի հետ խառնած, վերջապէս սապոնով և այլն։

Բացի այդ լուացուելն, հարկաւոր է իսկոյն շռել, որ խողովակն իստակուի։ Այնուհետև մի քանի օր ուշադիր պէտք է լինել դէպի անդամն և շուտ շուտ լուանալ և մաքուր պահել։

## Փափուկ շանկերն և նորա հետևանքներն։

Առանձնապէս բժշկելու համար շատ բան չի կարելի ասել, բացի ընդհանուր խորհուրդներն, որ արդէն տուել ենք նախազգուշութեան համար։

Պէտք է աւելացնել էլի մի քանի խօսք, երբ որ վերքն նկատվում է պէտք է խաղակ լուանալ գոլ ջրով և յետոյ մի փոքր հեշտութեամբ դիպչել վերքին դժոխքի քարով (ЛЯПИСЪ) այնուհետև վերքի վրայ դնել կամ ցամաք մաքուր կորպի (քրքքրած քաթան) կամ վերջապէս բամբակ ձիթով։ Պէտք է հանգիստ մնալ, շատ չմանդալ, որովհետև այս վերքից շատ անգամ առաջ է գալի շրջակայի և աւելամուկների բորբոքումն, որոնք թարախակալում են և պատճառում մի երկարատև բորբոքումն հիւսուածների, թարախահոսութեան հետ։

Առհասարակ պէտք է ասել, որ ինչպէս այս փափուկ վերքն առաւելապէս սիֆիլիսի կոշտ վերքն անկարելի է բժշկել առանց բժշկի դիտողութեան, ուրեմն ի զուր պէտք չէ ժամանակ կորցնել, այլ շտապել բժշկի խորհուրդին.

Բացի վերքի տեղական բժշկութիւնը, հարկաւոր է տալ էլի մի քանի խորհուրդներ, երբ որ վերքն երևաց նա մանաւանդ որոշուեցաւ, որ սիֆիլիսի յոպոնիա ունի, առաջի շաբաթներումն մինչև 6—8 շաբաթն հարկաւորութիւն չկայ հիւանդին ենթարկել ընդհանուր բժշկութեանը։

Ընդհանուր բժշկութիւնը թէև անհրաժեշտ է, բայց դեռ ևս համարվում է անտեղի և վնասակար։ պէտք է սպասել հիւանդութեան ընդհանուր երևոյթներին թէև այդ ժամանակուայ միջոցին անուշադիր չպէտք է լինել բոլորովին կեանքի այլ պայմաններն պէտք է բարելաւացնել թէ կերակուրի և թէ բնակարանի կողմից, որ կարելի լինի հեշտութեամբ յաղթել եկող հիւանդութեանը։

Պէտք է մաքուր պահպանել այն տեղերն մարմնի վրայ, ուր առաւելապէս զետեղվում են սիֆիլիսի երևոյթներն, ինչ-



պիսի են քամակն, կանանց սեռական անդամի մասերն, զաւակատան բերանը, պորտի մօտերքն, շրթունքներն և բերանը, բողազն և քիթն, կռան և ծնկան տակերն և այլն։

Մանաւանդ երկու հոգիս կանանց սեռական անդամների վրայ պէտք է ուշադիր լինել, շատ շատ լուացուել և օծել իւղով խառն կարբոլի, տիմոլի և այլ դեղերի հետ։

Կերակրվել սննդարար կերպիւ թարմ մսեղէնով և կանաչով չափաւորապէս գինի։

Սենեակն պէտք է լինի մաքուր օդով, առանց խոնաւութեան, լաւ է երկրորդ յարկումն։ Տաքութեան աստիճանը հաւասարապէս 16—18° ջ։

Հիւանդն կարող է շարունակել իւր պարապմունքն, եթէ շատ յոգնեցուցիչ չէ։

Հարկաւոր է մաքուր օդումն շրջել մանաւանդ տաք եղանակին, իսկ խոնաւ օրերին, ըստ մեծի մասին մնալ սենեակումն և եթէ անհրաժեշտ է դուրս գալ տանից պէտք է պատել կառքով և հագնուել տաք։

Աւելամուկների աստիճան առ աստիճան ուռչելն և մեծանալն միշտ իւրեան հետ ուղղակից ունի գլխացաւ, ոսկորների խաղերի և մկանունքների ցաւ։

Շատ անգամ գլխապտոյտ, անքնութիւն, սաստիկ յոգնածութիւն և թոյլութիւն։ Այս երևոյթներն առաւել նկատելի են 6—8 շաբաթներումն։

Այս ժամանակ արդէն բժշկի հոգացողութեամբ միայն կարելի է օգնութիւն գտնել։

Արդէն այս ժամանակից սկսվում է ընդհանուր բժշկութիւնը սիֆիլիտիքական հիւանդութեան խոհեմութեամբ և համբերութեամբ ի հարկէ ընդհանուրի հետ չը պէտք է մոռանալ և մանաւորն ուր որ երևում է ախտի նշաններն, զանազան օծանելիքներով և դեղերով մի կողմից պէտք է բուժել, իսկ միւս կողմից պաշտպանել զանազան պատահական դրդռանքից և տալ հանգստութիւն վարակուած անդամներին։

Էլի մի քանի խօսք ևս աւելացնենք ընդհանրապէս։

Սիֆիլիսով հիւանդն պէտք է ինկատի ունենայ, որ երկար և բարակ համբերութեամբ տարիներով պէտք է բժշկուի, որովհետև և ինքն ախտն երկարատև է, բժշկուիլ հարկաւոր է երկար ժամանակ, պէտք է միշտ յիշէ, որ նա մի ժամանակ եղել է վարակուած այդ ախտով և զգուշանայ։ Իմ կարծիքովն այսպիսի հիւանդներն կամ պէտք է ամենևին չամուսնանան կամ շատ ուշ, գոնէ ոչ վաղ երեք տարուց ամենաճիշտ կերպիւ բժշկելոց յետ. նոցա բարոյական պարտականութիւնն է պսակից առաջ կրկնակի ենթարկուել մասնագէտ բժշկի քննութեանը և ստանալ նորանից համաձայնութիւն ամուսնանալու։

Այս ախտն այնքան տարածուած է այժմ հասարակութեան մէջ, որ հարկաւոր է մտցնել ինչպէս մի պարտաւորեալ օրէնք ամուսնութեան մէջ բժշկի վկայականը նոր պսակողների առողջութեան մասին։

Այլապէս նոր սերունդն գոյանում է այնքան հիւանդոտ և թոյլ որ շուտով մենք կը հասնենք կատարեալ հրէշութեան բարոյականապէս և մարմնապէս։

---

## Յաւելուած.

Այստեղ հարկ եմ համարում համառօտապէս ասել մի քանի խօսք մարդու սեռական զգայարանքի վրայ, երբ որ դա շեղվում է իւր բնական ընթացքից և ենթարկվում է այս կամ այն հիւանդութեանը։

ա) Ծայրահեղ գրգիռն երազախաբութիւն և մարմնաշարժութիւն։ բ) Անդունակութիւն յարակցութեան։

Բացի այն վերոյիշեալ հիւանդութիւններն, տրպիսի են. տրիպերն իւր հետևանքներով, փափուկ վերքն և սիֆիլիսն, որ շատ անգամ պատճառ են լինում այս հիւանդութեանց։



Նոյնպէս կան հանգամանքներ, որ ինքնուրոյն գոյանում են զգայարանքների հիւանդութիւններն։ Ուրեմն տեսնենք կարգով ի՞նչ են այս տկարութիւններն և ի՞նչով կարելի է օգնել։

---

### Ծայրայեղ գրգիռն։

Սա մի այնպիսի զգացմունք է, որ հիւանդն անդադար զգում է ցանկութիւն յարակցութեան, բայց յարակցութիւնը սորան չի բաւականացնում։ Սոցա անդամն համարեա միշտ լարած է, սոքա զգում են մի առանձին անհանգստութիւն, թէ սեռական անդամի մէջ, թէ նորա շրջակայքն մինչև անգամ ճռներումն. սոցա համար պահանջմունք է շուտ շուտ թափել շեռն։

Շատ անգամ կամ երևակայութիւնը վառուելիս, կամ կնոջ հետ խօսելիս, արիւնը տալիս է գլուխն, զգում են գլխի պտոյտ, աչքի առաջն պէծեր, ձեռներն և ոտներն դող են ընկնում և հաղիւ թէ կարողանում են կանգնել ոտի վերայ։ Այսպիսի հիւանդներն զրկվում են քնից և հանգստութիւնից։

Սոցա երազներն լոտ մեծի մասին գրգռիչ են և գիշական։

Երևակայութիւնը սկսվում է խանգարուել, կորցնում է առողջութիւնը, խանգարվում է մարսողականութիւնը, անընդունակացնում է մի որ և իցէ պարապմունքի, մանաւանդ մտաւորական։

Այսպէս աստիճան առաստիճան հիւանդն թուլանում է և նուազում։ Այս հիւանդութիւնը, եթէ երկար է տևում շատ անգամ հասցնում է ցնորքի և գժութեան։ Իսկ եթէ իւր կրքերին միջոց չկայ բաւականութիւն տալու հիւանդն կարող է ամենածայրահեղ անասնական և գազանական մեղքեր գործել։ Շատ է պատահում, որ այսպիսիներն սկսում են պարապել մարմնաշարժութեամբ և այս ճանապարհով շուտով հասցնում են իրանց գերեզմանին։ Ծայրահեղ բորբոքուելուց

քիչ չէ պատահում որ հիւանդն անկարող է լինում յարակցութեան պատեհ ժամանակին։

Այս հիւանդութեան պատճառն բացի վէներեան ախտերից, ինչպէս ասացինք, շատ անգամ իրան հիւանդի թոյլ և հեշտակեաց կեանքի և բնութեան մէջն է։

Վատ օրինակներն, շռայլ մեծանալն և անչափութիւնը կերակուրների և խմիչքների մէջ։

Անգործունէութիւնը, զանազան երևակայութիւնը վառող գրքեր կարդալն և պատկերներին նայելն։

Սարմնական աշխատանքի և մարզողութեան պակասութիւնը։

Երիտասարդ հասակում զանազան դրգռիչ բաներ դործածելն որպիսի են պիպեղ, տաք դեղ, մանանեխ, գինի, արաղ և այլն։

Բացի սորան անչափաւորութիւնը սեռական յարաբերութեանց։

Այս ծայրահեղ հեշտագրգիռ տկարութիւնից յետ, հետևում է բացի կատարեալ թոյլութիւնը սեռական անդամի, որի վրայ յետոյ կը խօսենք նոյնպէս

## Երազախաբութիւն.

Այս երազախաբութիւնը մի այնպիսի ախտ է, որ երիտասարդ հասակումն դեռ ևս, երբ որ անդադար գոյանում է սերմն, սա կարծես թէ մի բնական բան է. ի հարկէ պատճառ ունենալով, մատաղ հասակն, ուր ամեն առ և տուրն մարմնի կատարվում է արագութեամբ։

Այս հասակումն, եթէ երբեմնապէս պատահում է երազախաբութիւն, սա համարեա բնական է։ Որովհետև մի անդամ երբ որ դոյութիւն ունի, երբ որ զարգանում է և փարթամանում, նա պարտաւորված է իւր նշանակութիւնը, իւր պաշտօնը կատարել։



Բայց այս երազախաբութեան մէջ իբրև բնութեան պահանջմունք և այն երազախաբութեան մէջ, որ հետևանք է տկարութեան համարեա սահման չկայ։ Ահա սա է պատճառն որ երազախաբութիւնը համարվում է վտանգաւոր, որովհետև թէև բնականապէս, բայց երբ սկսում է երազախաբութիւնը օրաւուր շտապ շտապ պատահել անկատելի կերպիւ թուլացնում է մարդուն և հասցնում է կատարեալ հիւանդութեան։

Այստեղ խօսքս նորահաս երիտասարդի վրայ էր։ Իսկ եթէ արդէն հասակն առած մարդ է, վայելել է կեանքի քաղցրութիւնը, մինչև անգամ առաւելապէս և այնքան թուլացել է, նորա սեռական անդամն, որ նա ստէպ ստէպ, ենթարկվում է երազախաբութեան, կարծիք չկայ որ այդ արդէն հիւանդութիւն է և շատ ծանր։

Այս դէպքումն պէտք է որոշել մի քանի աստիճան, մի և նոյն հիւանդութեան։ Պատահում է երբեմնապէս երեզախաբութիւնը, գիշերն քնած ժամանակ, ուր ճշմարիտ երազում ամենաքնքուշ և քաղցր սեռական փաղաքշանքների մէջ, նա թափում է սերմն. ընդհակառակն պատահում է նոյնպէս քնած ժամանակն սերմնահոսութիւն առանց երազի մինչև անգամ հիւանդն չի զգում, թէ ինչպէս պատահեց այդ։ միայն նկատում է արթնացած ժամանակն։ Բացի այս կան հիւանդներ, որոնց հետ պատահում է սերմնահոսութիւն արթուն ժամանակն, երբ որ վառուած երևակայութեանն ենթարկուած լինելով, կամ խօսում են այնպիսի կանանց հետ, որոնք շատ հաճելի են, սկզբիցն սոքա համարեա թէ զգում են այնպիսի բաւականութիւն, որ կարծես թէ, սեռական յարակցութեան մէջ են, բայց յետոյ, օր աւուր զգացմունքն թուլանում է և հասնում այն դրութեան, որ հոսում է սերմն թէ գիշեր և թէ ցերեկ նա և այն ժամանակ, երբ պատճառ չկայ երևակայութիւնը վառել։

Այսպիսի հիւանդներն սկսում են թուլանալ մարմնով և

հոգով. սոցա հոգեկան դրութիւնը լինում է սաստիկ տխուր և մարսողութիւնը խանգարվում է: Շատ անգամ ոտներն սկսում են դողալ և թուլանալ:

Շեռն չի կարողանում երկար ժամանակ պահել, հետևում է փամփուշտի և նորա առաջնաւոր մասի բորբոքումն: Կարճ ասել խանգարվում է բոլոր մարմնի առ և տուրն:

Մարմնաշարժողությունը նոյնպէս մի տեսակ սերմնահոսութիւն է, որ շատ անգամ ծայրայեղ գրգիռն հասցնում է մանուկ հասակումն դեռ ևս, այն ենթադրութեան, որ մարդս իւր համար շինում է սովորութիւն տալ այս ձևով իւրեան կրքերին բաւականութիւն:

Այսպիսի անբնականաբար սերմն հոսելով մարդիք գրգռում են իւրեանց թէ մարմնապէս և թէ հոգեպէս, զգայարանքների անբնական լարուելուցն, խանգարվում է նոցա թէ մարմնու և թէ հոգու գործարաններն, կարճ ասել, հետևում են մի և նոյն երևոյթներին ինչ լինում է վերոյիշեալ երազախաբութիւնից և հետևաբար առաջացած սերմնահոսութիւնից:

Ուրեմն աւելորդ է կրկնել մի առ մի նոյն երևոյթներն:

Այսքանս պէտք է ասել, որ մարմնաշարժութիւնից առաջ եկած մարմնախանգարումն առաւել քայքայիչ է: Իսկ հոգեկան հիւանդների մեծ քանակութիւնը միշտ ունեցել են իւրեանց պատճառն մարմնաշարժութիւնը, որ մի անգամ սովորութիւն շինելով, էլ չեն կարողացել յետ դառնալ իւրեանց վատ սովորութիւնից, մինչև հասել են ցնորման, կամ բարակացաւի, կամ ատամոքսի և աղիքների տկարութեան, կամ մի այլ առաւել ծանր և անփրկելի հիւանդութեան, կարճ ասել վերջ ի վերջոյ հասնում են վաղեմի մահուան, ամենագեղեցիկ հասակում:

---

## Անբնականութիւն սեռական հարաբերութեան:

Այս հիւանդութեան մասին պէտք է որոշել մի քանի հարց, արդեօք հիւանդը չի ունեցել տրիպեր, շանկիր կամ սի-



ֆիլիս: Արդօք չ'կայ նորա սեռական անդամների մէջ մի որ և իցէ պակասութիւն նեղանալն խողովակի, բորբոքումն փամփուշտի և նորա առաջնաւոր մասի և այլն:

Եթէ արդէն որոշուեցաւ մի այսպիսի տեղական պատճառ կարծիք չ'կայ պէտք է սկզբից հոգալ այս հիւանդութեանց բժշկելու վրայ, որովհետև ըստ մեծի մասին այսպիսի դէպքումն սոքա են հիմնաւոր պատճառներն անընդունակութեան:

Իմ խօսակցութիւնս այժմ այս պատճառներից առաջ եկած անկարողութեան վրայ չէ: Նա մանաւանդ ընդհանրապէս մենք բաւականին խօսեցանք այդ ախտերի վրայ: Բայց կայ մի այլ ձև անընդունակութեան սեռական հարաբերութեան, դա է ըստ՝ Ռոյլ-Ինֆ՝, ուր ոչ մի առանձին պակասութիւն չ'կայ սեռական գործարանների մէջ, բայց մարդն անընդունակ է գործել, միանալ, սա է մեր ճառելու առարկէն:

Շատ անգամ սեռական հարաբերութեանց անընդունակութիւնը երիտասարդ մարդկերանց, ունի իւր արմատն նորա բարոյական կամ հոգեկան դրութիւնը, որ նա ճ'նշուած լինելով երկիւղից, ատելութիւնից, զզուանքից, կամ սէրից, չէ կարողանում յարակցել: Մենք կը տեսնենք տաքացած ցանկութիւնով լեր երիտասարդն շտապում է դէպի մի անառակական տուն ու իսկ յարակցութեան ժամանակն նորա անդամն թուլանում է և չի հնազանդվում տիրոջ կամքին, դա երկիւղից է, վախում է վարակուել մի որ և իցէ վէներեան ախտից:

Պատահում է, երբեմն առողջ և հաստավիզ գիւղացին կրակով լեր զգացմունքով, սիրահարուած աշուղի նման ձեռք է գցում իւր սիրահարին, վերջապէս պսակը միացնում է նրանց: Եւ իսկ սրտով ցանկացած գիշերն նա անկարող է յարակցել իւր կնոջ հետ *): Երբեմն էլ կը տեսնէք առողջ և այլ դի-

---

*) Հայաստանի գիւղերումն այս հանգամանքումն ասում են «կապել են» ասը թէ, պսակից առաջ մի որ և իցէ նորափէսի թշնամի ջադուի գրեր է գրել տուել և նորա մարդութիւն կապել:

պուտածքում բոլորովին ընդունակ մարդ, անկարող է իւր ատելի կնոջ հետ յարակցել։

Այս դէպքերն պատահական են, անցաւոր են, սոքա հիմնած են մարդու բարոյական կամ հոգէական դրութեան վրայ, ինչպէս ասինք, թէև պէտք է ասել, որ այսպիսի հիւանդներից շատերն ազատ չեն եղել սկզբից երաշխաւորութիւնից, մարմնաշարժութիւնից կամ անչափաւորութիւնից։

Իսկապէս անընդունակութիւնը արտայայտվում է հետեւեալ կերպիւ կամ սեռական անդամն փոքր ինչ լարվում է և շուտով հոսում սերմն ու թուլանում, դեռ ևս չի յարակցած, կամ թէև մարմինը բոլորովին չի լարվում, բայց ցանկութիւնը մեծ է և այնուամենայնիւ, հոսում է սերմն, կամ թէև դըրգռվում է ցանկութիւնից, բայց ոչ անդամն է լարվում և ոչ սերմն է հոսում։

Այս երևոյթների պատճառներն զանազան են նայելով հասակին, կազմուածքին և անցկացրած կեանքին։ Շատ անգամ պատճառն լինում է այն, որ մարդն սիրահարուած է կամ նշանուած է, ինչպէս վերևն յիշեցինք, կամ ընդհակառակն ենթարկվում է յանկարծակի մի ահ ու երկիւղի, կամ՝ մի մեծ քամբագդութեան և ժամանակաւորապէս զրկվում են սեռական զգայարաններից *)։

Առհասարակ պէտք է ասել, որ այս սեռական քաղցը զգացմունքն ունի իւր չափն ու սահմանը. սորան պէտք է պահել և խնայել։

Սորա հետ եթէ զգուշութեամբ և խնայողութեամբ վարվի մարդս կարող է երկարատև զուարճանալ այնպէս, որ մենք տեսնում ենք մաշուած երիտասարդներ, անընդունակ հարակ-

*) Ղէնեայ եղած ժամանակս ինձ պատմում էին ոմանք մասնագէտ պրոֆէսորներից, որ այնտեղ մի քանի տարի առաջ յանկարծակի պատահած մեծ մանկութիւնից շատերն նոր մանաւանդ հրէաներից կորցնելով իւրեանց կարողութիւնը, կորցրել էին և սեռական ընդունակութիւնը։



ցութեան և առողջ ծերերը 70—80 ամաց ընդունակ յարակցելու և սերմելու, նաև առոյգ ժառանգ ստանալու։

Այսպէս կարելի է ասել. այս բնութեան շնորհը, որ տուած է մարդուս նորա համար, որ կազմէ ընտանիք ունենայ իւր զուարճութիւնը և վաստակէ իւր նման սերունդ սա մի գանձ է որ պահանջում է պահպանողութիւն և խնայողութիւն։

Շռայլն, ինչպէս ամբողջ մարմնի ամեն մի անդամն վատնում է անկանոն, այնպէս էլ այս քաղցը և վսեմ զգացմունքն շուտով է փչացնում և իւր անձն հասցնում կատարեալ քայքայման։

Թէև պատահում է, որ մի քանիսն այսպիսիներից ձուաներն հանած աքաղաղի և եզան նման սկսում են աւելի չաղանալ և պարարտանալ։

Այսպէս մենք համառօտապէս տեսանք երկու երևոյթներն էլ թէ ծայրահեղ գրգիռն, երաշխաւորութեան և մարմնաշարժութեան հետ. և թէ ընդհակառակն անընդունակութիւնը սեռական զգայարանքների։

Երբ որ գրգիռն սաստկացած է, երբ որ հիւանդն անկանոն բորբոքվում է և այսպէս կամ այնպէս անբնականաբար հոսում է սերմն, նորան հարկաւոր է ոչ թէ զուարճանալ այդ հանգամանքով, ինչպէս շատերն անում են, մինչև անգամ պարծենում են իւրեանց այս անբնական գրգռման վրայ, կարծելով այդ մի առանձին քաջութիւն է, այլ պէտք է, իսկոյն ուշք դարձնել իւրեան կենցաղավարութիւնը կարգաւորելուն։

Պատրաստ կենալ շատ տաքացուցիչ և գրգռիչ ուտելեղէնից և խմիչքից։ Երեկոյեաներն չ՝ընթրել կամ չափաւոր և քնելուց շատ վաղ։

Ուշք դարձնել ստամոքսի կանոնաւորութեան վրայ և առաջն առնուլ եթէ կայ ամրութիւն, ղաբզութիւն։

Անկողինը պէտք է լինի հարթ և հաւասար և ոչ շատ փափուկ։

Պէտք է աշխատել քնել աւելի մի կամ միւս կողքի վրայ և ոչ թէ միջքի։

Շատ վատ սովորութիւն է առհասարակ տեղաշորումն քնելուց առաջ կարդալ, դա վնաս է աչքին։ Իսկ զանազան վայր ի վերոյ ռոմաններ կարդալն, նա մանաւանդ վնասակար է, թէ սեռական գրգռմանը և թէ ընդհանրապէս մտաց աշխուժութեանը և թարմութեանը։

Որովհետև քնած ժամանակն միտքն, փոխանակ հանգստանալու տանջվում է զանազան արկածքների տակ, որ կարդացել է և ի հարկէ հանգիստ քուն չը մտնելով առաւօտեան թարմ չէ ամբողջ մարմինը և նորա հետ էլ ուղեղն։

Առաւօտեաններն զարթնելով, իսկոյն պէտք է դուրս գալ տեղաշորից, լուացուել եթէ միջոցն և ժամանակն ներում է բոլոր մարմնով, իսկ եթէ ոչ գոնէ սեռական անդամն։ Պարզ նախաճաշիկից յետ, կաթ, մածուն, կամ մի բաժակ թոյլ թէյ մի կտոր հացով վայելելուց, իսկոյն պէտք է մի մարմնական աշխատանքով զարաչել կամ մարզութեամբ, գոնէ կէս ժամաչափ։ Յետոյ արդէն կարելի է գնալ իւր պարապմունքին։

Ինչ կ՝վերաբերէ մասնաւոր, իսկ բժշկական միջոցներին, վերջին ժամանակներս, այս ախտերի մասին մեծ առաջադիմութիւններ են արած։

Արդէն հնարած են այնպիսի գործիքներ, որ հասցնելով այն տեղն, որ տեղից դուրս է ցայտում սերմն, ներգործում են կամ մի որ և իցէ ջրալի դեղով շփելով, կամ թանձր դեղով յիւղի հետ խառն թողնում են այնտեղ, որ հալուի և ներգործէ։

Բացի այդ կան նոյնպէս գործիքներ, որոնց միջոցաւ ներգործում են զանազան ատիճանի սառնութեան ջրով ամբողջ խողովակի և փամփուշտի առաջնաւոր մասի վրայ, որտեղից ունի ճանապարհ սերմն. կարճ ասել այս վերոյիշեալ միակարգ և միակերպ սեռական զգայարանքների արատութիւնը հմուտ



մասնագէտի ձեռքին հեշտ բժշկելի են։ Ի հարկէ, եթէ այս հիւանդութիւններն առաջացած են վէնէրեան ախտից, նոցա բժշկելով մենք համնում ենք երկու նպատակին էլ։

## Անընդունակութիւնը սեռական յարաբերութեան։

Այստեղ պէտք է նոյնը կրկնել ինչպէս և ամէն տեղ։ Երբ այս պակասութեան պատճառն վէնէրեան ախտերն են. բաւական է պատշաճաւոր բժշկութիւն գլխաւոր պատճառի, որ ստանանք մերձաւորապէս օգնութիւն անընդունակութեան դէմ։

Եթէ մի առ մի յիշենք թէ ինչ դէպքերում է առաջ գալի այս հիւանդութիւնը կ՝տեսնենք հետևանքն, այն հանգամանքումն, որ հիւանդն ունի ջղային թուլութիւն։ Ուրեմն պէտք է աշխատել ընդհանրապէս կարգաւորել նորա առողջութիւնը, եթէ նորա թոքերն և սիրտն առողջ են կարելի է խորհուրդ տալ սառն ջրումն լողանալ. իւրեան չը յոգնեցնել մտաւոր աշխատանքով, կերակրուել ըստ մեծի մասին թարմ մսեղէնով, չ՝գործ ածել գրգռիչ և բորբոքիչ խմելիք և կերակուր։

Եթէ ստամոքսն կարգաւորուած չէ, ուշք դարձնել նորա վրայ։

Արիւնի պակասութեան ժամանակն գործ ածել պատշաճաւոր դեղորայք (երկաթ, քինաքինայ և այլն)։

Զգաստաւորապէս կարելի է գործ ածել թոյլ զօրութեամբ էլէքտրիքական հոսանք,

Երկրորդ հանգամանքումն, երբ ներգործում է թուլացուցիչ կերպիւ Երկիւղն, կամ սէրն ինչպէս պատահում է երիտասարդներին, դա բոլորովին ժամանակաւոր է և առանց մի որ և իցէ բժշկական խորհուրդի կարող է անցնել։—Իսկ այն դէպ-

քերումն ուր արդէն սեռական անդամն կորցրել է իւր ընդունակութիւնը կատարեալ զբաղվելու և հոսում է սերմն, բոլորովին առանց լարուելու, այդ դէպքումն չ՚նայելով ինչ հասակի և լինի հիւանդն, կարելի է օգնել: Այստեղ կան զանազան պատշաճաւոր դեղորայք թէ արտաքուստ և թէ ներքուստ ընդունելու համար: Այստեղ նոյնպէս շատ օգտակար է լուացվելն սառը ջրումը և էլէքտրիքական հոսանքն:

Երկարատև բժշկութեամբ և համբերութեամբ կարելի է հասնել նպատակին: Բայց իմ վերջին խորհուրդն այս է, որ սեռական անընդունակութեան դէմ զանազան գրգռիչ դեղորայքն վնասակար են և շատ վտանգաւոր, շատ է պատահած, որ անառակ և անբարոյական մարդիքն իւրեանց ցանկութիւնը աւելացնելու համար ընդունել են այս կամ այն յայտնի կամ ծածուկ դեղորայքն և զոհ են դնացել իւրեանց վավաշոտութեանը:

---

Дозволено Цензурою. Тифлисъ 15 Сентября 1880 г.

Типог. Мартиросіанца, на Орбеліановской улицѣ. д. № 5

2753

2013

<< Ազգային գրադարան

NL0073642